



Փ Ա Ր Ո Ս *Paros*

ISSUE 59 – JUNE / ԹԻԻ 59 – ՅՈՒՆԻՍ 2022

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

ԹԵՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Շբ., 4 Յունիս - Դարձեալ անմոռանալի մէկ օր, դարձեալ Խաչքարի օրհնութիւն, դարձեալ հայկական ներկայութիւն Միտնիի մէջ:

Onecrown ընկերութեան տնօրինութեան եւ Տիկին Էլօ Մկրտիչեանի հրաւերով, Բարձրաշնորհ Տէր Հայկագուն Արքեպիսկոպոս Նաճարեան Առաջնորդ Սրբազան Հայրը, ճշդուած ժամուն, ժամանեց Field of Mars գերեզմանատուն, ուր Տիկին Էլօ Մկրտիչեանի կարգադրութեամբ փոքր բաժին մը յատկացուած է Հայ համայնքին, ընդհանրապէս տրամադրուած վերջին հինգ տարիներուն Մերձաւոր Արեւելքէն գաղթած Հայ ընտանիքներուն, յարմար արժեքներով եւ վճարման դիւրութիւններով: Այս առիթով, Տիկին Մկրտիչեան նաեւ գեղեցիկ խաչքար մը նուիրած էր գերեզմանատան այդ յատուկ բաժինին, որուն քօղազերծման արարողութիւնն ու օրհնութիւնը որոշուած էր կատարել այսօր:

Սրբազան հօր կ'ընկերակցէին Արժանապատիւ քահանայ հայրեր՝ Տէր Նորայր Բաթանեան, Տէր Պարթեւ Գարագաշեան, Տէր Աւետիս Համբարձումեան, Տէր Միւռն Աւետիսեան, Թեմական Խորհուրդի ատենապետ՝ Պարոն Սարգիս Տէր Պետրոսեան եւ դիւանապետ Նշան Պասմաճեան: Հրաւիրուած էին նաեւ հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչներ եւ ընկերութեան տարբեր ներկայացուցիչներ: Մասնակցողներու շարքին՝ նախկին նահանգապետուհի Օրիորդ Գլատիս Պերեճիքեան:



Խաչքարի մըջ որ նուիրուած էր Տիկին Մկրտիչեանի կողմէ ի յիշատակ իր ծնողներուն՝ Կարապետ եւ Նուէր Մկրտիչեաններու:

Onecrown գերեզմաններու տնօրինման ընկերութեան ընդհանուր տնօրէնուհի Լի Շիրըր իր խօսքին մէջ ըսաւ. «այսօրուան խաչքարի օրհնութիւնը այս պատմական գերեզմանատան մէջ ի պատիւ է Հայ Քրիստոնէայ հաւատքին եւ մշակոյթին: Առաջին խաչքարերը ի յայտ եկան 9րդ դարուն, որոնք շարունակուելով Հայ ինքնութիւնը քանդակեցին պատմութեան մէջ, դարերու ընթացքին: Կարելոր է նշել, որ այս-

Հանդիսավար Պրն Տէյվիտ Համ ողջունեց ներկաները: Յիշեցնենք որ 2 Ապրիլին Պրն Համ հանդիսավարն էր Ֆրէնչա Տօրեսթի գերեզմանատան մէջ դրուած յուշարձանի օրհնութեան արարողութեան (տես Փարոս Ապրիլ թիւ 57): Ան նշեց որ այս ծրագրի իրականացումը կը պարտէինք Տիկին Էլօ Մկրտիչեանին, որուն նախաձեռնութեամբ Բայտի այս գերեզմանատան մէջ հայկական բաժին ստեղծուեցաւ եւ ահաւասիկ այսօր հաւաքուած էինք կատարելու քօղազերծումն ու օրհնութիւնը հայկական ներկայութիւնը փաստող

օրուան հայկական այս հողաբաժինը, բաղկացած 80 գերեզմանամասերէ, տրամադրուեցաւ Հայ գաղթող ընտանիքներուն, որոնք պարտադրաբար փախան իրենց տուներէն, զորս ակերուեցան պատերազմի ընթացքին: Խաչքարը շինուած է քանդակագործ Լեօ Հունանկի կողմէ, առջեւի մասին մէջ քանդակուած է խաչը, անմահութեան խորհրդանիշներով, նուերով: Ետեւի մասին վրայ քանդակուած է Տէրունական աղօթքը: Գլուխ գործոց մը»: Խօսքը ուղղելով Տիկին Էլոյին՝ «Էլօ, անգամ մը եւս կը գիտակցիմ եւ շնորհակալութիւն կը յայտնեմ քեզի քու համայնքիդ կատարած ծառայութեանցդ համար» եզրափակեց Տիկին Շիրըր:

Տիկին Էլօ Մկրտիչեան իր անգլերէն եւ հայերէն արտասանած խօսքերուն մէջ ըսաւ «Մեծ հպարտութեամբ կու գանք շնորհակալութիւն յայտնելու բոլոր այն հայրենակիցներուն, որոնք ընդառաջելով մեր կոչին տէր դարձան այս հողաշերտերուն, ձեռնտու պայմաններով: Որպէս գաղթողի մը զուակ, որ իր կեանքն ու ապագան կերտեց այս երկրին մէջ, փափաքս է որ մեր համայնքը գոյատեւէ, իսկ մեր հաւատքը խորհրդանշող խաչքարը կանգուն մնայ այստեղ ի յիշատակ ծնողքիս, որոնց երախտապարտ եմ»:

Ապա, Տիկնայք Էլօ եւ Շիրըր կատարեցին քօղազերծումը, որուն յաջորդեց Սրբազան հօր եւ չորս հոգեւոր հայրերու մասնակցութեամբ Խաչքարի օրհնութիւնը:

Այս առիթով, Նիւ Սաութ Ուելլզի գերեզմանատուներու ընդհանուր Խորհուրդի նախագահ Դոկտ. Ստեփան Գրգեաշարեան, որ երկրէն դուրս գտնուելուն պատճառով չէր կարողացած ներկայ ըլլալ արարողութեան, դրկած էր իր սրտի խօսքը, զոր կարդաց Պարոն Տէվլիտ Համ:



Իր եզրափակիչ խօսքին մէջ Սրբազան Հայրը ըսաւ. «Նախ շնորհակալութիւն Հօր Աստուծոյ որ մեզի շնորհեց արեւտ ու պայծառ օր մը կատարելու համար այս արարողութիւնը: Յատուկ է այս գերեզմանատունը ինձի համար: Յատուկ, որովհետեւ անոր նուիրուած է խաչքար մը տեղադրուելու գերեզմանատան հայկական բաժնին մէջ, ուր իրենց տուները թողած եւ այս երկրին մէջ ապաստան գտած ընտանիքներ տէր դարձած են հողաշերտերու, որպէսզի իրենց հարազատները եւ իրենք թաղուին արժանավայել կերպով, բան մը որ խիստ կարեւոր է իւրաքանչիւր Հայ ընտանիքի համար: Տիկին Էլօն ունեցաւ այդ տեսլականը սակայն պատկան մարմինները գիտակցեցան եւ ամեն դիւրութիւն

ընծայեցին մեր գաղթող եղբայրներուն եւ քոյրերուն»: Սրբազան Հայրը իր շնորհակալութիւնը յայտնեց նաեւ բոլոր ներկաներուն, որոնք գնահատեցին այս կարեւոր նախաձեռնութիւնը:

Ծաղկեպսակներու զետեղումէն ետք տեղի ունեցաւ թեթեւ հիւրասիրութիւն:

Կիր., 5 Յունիս – Կամքէ անկախ պատճառներով Սրբազան Հայրը չկարողացաւ մասնակցիլ NSW Ecumenical Council (NSWEC)-ի կազմակերպած Prayer for Christian Unity հաւաքական աղօթքին, որ տեղի ունեցաւ St Hurmizd Cathedral of the Assyrian Church of the East-ի մէջ՝ Կրինֆիլտ Փարք (Արեւմտեան Սիտնի): Այս աւանդական աղօթքը տեղի կ'ունենայ ամէն տարի Հոգեգալստեան (Պենտեկոստէ) օրը ի ներկայութեան զանազան եկեղեցիներու ներկայացուցիչներու: Աղօթքը վարեց Տաճարի հոգեւոր հովիւ Հայր



Բամեն Եուխանիսը, ի բացակայութեան Մար Միլիս Արք Զայայի եւ Մելպուրնի Առաջնորդ Մար Պենիամինի, որոնք անկողնոյ կը ծառայէին հիւանդութեան պատճառով: Սրբազան Հայրը պաշտօնապէս կը ներկայացնէր Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան, որուն կ'ընկերանային Արժ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեան, Ատենապետ Սարգիս Տէր Պետրոսեան եւ Դիւանապետ Նշան Սրկ Պասմաճեան: Այս վերջինը պարտականութիւն վերցուցած էր աղօթքին մասնակիցները առաջնորդելու Սաղմոսներու ընթերցումով: Աղօթքին ներկայ էին Հայ Առաքելական, Եունայթինկ Չըրչ, Կաթոլիկ, Անկլիքան, Հնդիկ ուղղափառ, Ասորի, Ղպտի, Քուէյքըր, Ուքրանական ուղղափառ, Սալվէշըն Արմի, Մէլքայթ եւ այլ եկեղեցիներու ներկայացուցիչներ ինչպէս նաեւ ներկայացուցիչներ Աւստրալիոյ Եկեղեցիներու Խորհուրդէն, առաւել 150-է աւելի հաւատացեալներ: Տաճարի երգչախումբը գեղեցիկ շարականներով հանդէս եկաւ: Երկրի ճանաչման եւ բարի գալստեան խօսքը արտասանեց Ապօրիճին Ուաքա Ուաքա ազգի Քրիստոնեայ ղեկավար եւ ջատագով Տիկին Պրուք Փրէնթիս: Յաւուր պատշաճի քարոզեց NSWEC-ի նորընտիր նախագահ Ինայթինկ Եկեղեցւոյ Կին համայնքապետ Տիկ Միունկ Հուա Փարք: Փակման աղօթքը կատարեց Խորհուրդի ընդհանուր քարտուղար, ղպտի քահանայ Շնուտա Մանսուր:



Ապա ներկաները հրաւիրուեցան քովի սրահը, ուր NSWEC-ի Դրամահաւաքի յանձնախումբը կազմակերպած էր Դրամահաւաքի Ընթրիքը: Այս ծրագիրը մտայնացումն է Նշան Սարկաւազ Պասմաճեանին, ան նաեւ ընդհանուր պատասխանատուն է չորս տարիներէ ի վեր: Ճաշկերոյթին կը մասնակցէին մօտ 200 անձիք, որոնց մէջ 15-ի մօտ Առաքելական եկեղեցւոյ անդամ Հայեր գլխաւորութեամբ Տէր Աւետիսի եւ Տէր Միւռնի: Հաւաքին ներկայ էր նաեւ Վերապատուելի Գրիգոր Եւմուշաքեան: Հայ համայնքէն ձեռնարկին իրենց աջակցութիւնը ցուցաբերած էին Տէր եւ Տիկին Յովիկ եւ Միւռնա Պարսումեաններ, Տէր եւ Տիկ Սարգիս եւ Ալիս Տէր Պետրոսեաններ, Տոքթ եւ Տիկ Կարօ եւ Լօրա Արթինեաններ, Տոքթ եւ Տիկ Արթին եւ Մարօ Ճէպէճեաններ, Տէր եւ Տիկ Գեորգ եւ Մարինա Չափրազեաններ, Տիկին Էլօ Մկրտիչեան, Տիկ Մարօ Սարգիսեան, Տէր եւ Տիկ Պետրոս եւ Իլտա Զօրլու, Տէր եւ Տիկ Արմէն եւ Կարինէ Պաղտասարեան, որոնք, ի միջի այլ յարանուանութեանց անդամներու, իրենց նուերներով երաշխաւորեցին ձեռնարկը: Խորհուրդի վարչութեան անդամ Մանտի Թիպի կատարեց հանդիսավարութիւնը: Այս լուրջ ձեռնարկին Յայտագրին մէջ խօսք առին Պրուք Փրէնթիս, նիւթ՝ 5 years since the Statement from the Heart: Ecumenism & Reconciliation for Healing: Ապա խօսք առաւ Հայր Եուխանիս, նիւթ՝ Planning for the Future: New Theological College. Յիշեցնէնք մեր ընթերցողներուն, որ երկու տարի առաջ Ասորի եկեղեցին հիմը դրաւ Աստուածաբանական Ճեմարանի մը, որուն յաջողութեան համար մեծ օգտակարութիւն ունեցաւ NSWEC-ի վարչութեան անդամ Փրոֆ Տայան Սփիտ, որ իր



կարգին խօսեցաւ Յովի Պօղոս Պապի նշանաւոր Ut Unum Sint կոնդակին մասին: Իսկ երիտասարդ փաստաբան Օլիվըր Սլէուս խօսեցաւ Domestic Violence in NSW նիւթին մասին: Յայտնենք նաեւ որ NSWEC-ը հետամուտ է այս նիւթով եւ 14 լեզուներով յայտարարութիւններ տպած է բաժանելի տարբեր յարանուանութիւններու, որոնց կարգին Հայերէն, Արաբերէն եւ այլք: Տիկին Միունկ Հուս Փարք եւ Նշան Սարկաւազ մեկնարկը կատարեցին «Friends of NSWEC» ծրագրին, որուն մասին հնարաւորինս բացատրութիւն տուաւ Նշան սարկաւազ: Երեկոն ճոխացուցին Աստրական եկեղեցւոյ պարախումբի անդամները աստրական ֆոլքլորիք յատուկ պարերով եւ Church of South India-ի բարձրորակ երգչախումբը: Երեկոն ասպահովեց մօտաւորապէս 15000 Աւստրալական Տոլար: Շատ մը մասնակիիցներու վկայութեամբ՝ երեկոն անմոռանալի էր:

Ուրբ 10 եւ Շբ 11 Յունիս – Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տէր Աւետիս եւ Տէր Միւռոն Քահանայ հայրերուն ինչպէս նաեւ դիւանապետ Նշան Պասմաճեանի, ներկայ գտնուեցաւ, առաջին օրը՝ Արման Նշանեանի «Songs of Solomon» եւ երկրորդ օրը՝ Ճիւան Աւետիսեանի «Gate to Heaven» ֆիլմերու ցուցադրութեանց, ընդառաջելով Հայկական Ֆիլմի Փառատօնի Ընդհանուր պատասխանատու Տիկնանց՝ Մարկարէթ Չէյթրի եւ Հուրի Տէմիրճեանի հրաւերին: Հայկական Ֆիլմերու Փառատօնը վեցերորդ անգամ ըլլալով կը կազմակերպուի Համազգայինի Շանթ Մասնաճիւղին կողմէ եւ տարուէ տարի մեծ յառաջ-



խաղացք կ'արձանագրէ, փնտռուած ձեռնարկ մը ըլլալով Աւստրալահայ եւ ոչ Հայ հասարակութեանց համար: Սրբազան Հայրը եւ Թեմական Խորհուրդը միշտ քաջալեր հանդիսացած են իրենց ներկայութեամբ եւ բարոյական նեցուկով: Յայտնենք որ երկու ձեռնարկներուն ալ պարապ աթոռ չէր մնացած սրահին մէջ: Հրաւիրուած էին Հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչները ինչպէս նաեւ փառատօնին երաշխաւորները:

«Songs of Solomon»- ֆիլմը ձօնուած էր Կոմիտասին: Նշանեան իւրայատուկ տաղանդ է: Ան արուեստասէր եւ արուեստագէտ ընտանիքի զաւակ է: Ան կարողացած էր ճիշտ տիպարները գտնել իր խորհրդանշական պատկերները փոխանցելու հանդիսատեսին, ստեղծելով զգացական պահեր: Արցախցի մանուկ Կոմիտասի դերակատարը տաղանդաշատ երեխայ մըն է գոր Նշանեան կարողացած էր մարզել եւ զինք դարձնել աւելի համակրելի քան մեղքնալի: Ֆիլմը ազգային հպարտանք կը ներարկեր տեսարան առ տեսարան:

Նշանեան, պատասխանելով ABC-ի երկարամեայ հաղորդավար հանդիսավարուհի Լօրա Չիլինկիրեանի հարցումներուն, բացատրեց որ ֆիլմը Ցեղասպանութեան չէր նուիրած այլ զայն ձօնած էր Կոմիտասի: Ան կրցած էր Կոմիտասի աչքերուն հայեացքին ընդմէջէն ազգի մը մութ ապագային խորհրդանշիչը դրսեւորել: Օսմանեան քանդիչ պետութեան հնազանդող ամբոխը կարողացած էր ներկայացնել որպէս կարգապահ աւերողներ: Հայ իւրաքանչիւր անհատի աչքը բարին կը խորհրդանշէր: «Այս ֆիլմը ստեղծագործական ֆիլմ է եւ ստեղծագործողի ազատութիւնը եւ ինծի թոյլատրած եմ: Զգացողութիւնը կարեւոր է սինեմարուեստի մէջ իսկ երբ ֆիլմի մը մէջ քաղաքականութիւնն ու զգացումը իրարու հետ կը շաղախուին՝ այն ատեն այդ շաղախը կը դառնայ զենք յօգուտ նպատակին: Այսպիսով է որ ֆիլմին պատգամը կրնաս միջազգայնացնել» եզրակացուց Նշանեան: Բեմադրիչին յառաջիկայ ֆիլմերուն նիւթերը պիտի ըլլան 1988-ի Երկրաշարժը եւ Կուրճիերը:

11 Յունիսի ֆիլմը չցուցադրուած, կազմակերպիչները յատուկ հրաւիրեալներու համար քոքթէյլ տուին, որուն ընթացքին սաքսոֆոնով նուագեց երիտասարդ արուեստագէտ Յակոբ Հարֆուշեան, խանդավառութիւն ստեղծելով ներկաներուն մէջ:

Ճիւան Աւետիսեանի «Gate to Heaven» (Դրախտի Դարպասը) ֆիլմը Կալայի երեկոյի ֆիլմն էր, որուն ներկայ էր նաեւ բեմադրիչը: Օրուան հանդիսավարն էր SBS-ի նախկին հաղորդավար Ճորճ Տօնիկեան:



Ֆիլմի ցուցադրութենէն ետք տեղի ունեցաւ հարց-պատասխան: Բեմադրիչ Աւետիսեան յայտնեց թէ ինք այս ֆիլմը պատրաստած էր ամէն օր աղաղակելու աշխարհին 150 հազար Արցախցիներու անունով, «որոնց դէմ գործուած անարդարութեան դէմ չեմ հանդուրժած եւ պիտի չհանդուրժեմ: Եւ ամէն օր աւելի եմ ոգեւորում ու աշխատում»: Աւետիսեան յայտնեց որ իր նպատակն էր միջազգային համբաւի տիրացած դերասաններու միջոցաւ իր պատգամը փոխանցել միջազգային հանրութեան: Ըսաւ թէ իրաքանչիւր դերասանի հետ նստած ու բացատրած է թէ ինչի կը միտի իր ֆիլմը: Դերասաններէն շատեր հրաժարած են դեր ստանձնելէ, Ատրպէյճանի սեւ ցանկին մէջ մտնելու վախէն: Ֆիլմը նկարահանուած է 8 տարբեր երկիրներու մէջ եւ 80 տոկոսը 3 լեզուներով էր (անգլերէն, ֆրանսերէն եւ գերմաներէն) եւ որուն գլխաւոր դերասանը գերմանացի ճանչցուած դերասան Բիլարտ Սամմէլն է: «Մեր նպատակն է բացառիկ ֆիլմեր ստեղծել բացառիկ դերասաններով» յայտարարեց բեմադրիչը:

Աւետիսեանի յաջորդ ֆիլմը Revival-ն է, որ պիտի նկարահանուի ֆրանսական եւ իսլանտական ընկերութիւններու հետ համագործակցաբար նաեւ գլխաւոր դերասանները պիտի ըլլան եւրոպացիներ:

Եզրափակելով հարցազրոյցը Ճիւան Աւետիսեան, որ Արցախի քառօրեայ եւ 44-օրեայ պատերազմներուն մասնակից եղած է եւ նկարահանած, ըսաւ թէ տարբեր լեզուներով է որ պետք է պատմուի մեր Արցախի պատմութիւնը: Ճիշտ է որ Արցախի հարցը ֆիլմերով չի լուծուիր սակայն այս եւ նման ֆիլմեր շատ բան կը փոխեն հանդիսատեսներուն միտքերուն մէջ»:

Գ2., 14 Յունիս – Սրբազան հայրը, նախագահի հանգամանքով, Առաջնորդարանին մէջ ժողովի հրաւիրեց Թեմական Խորհուրդի Մայիս 14-ի Թեմական Պատգամաւորական Ժողովին կողմէ վերընտրուած կազմը: Ժողովը կազմեց իր դիւանը հետեւեալ ձեւով.

- Սարգիս Տէր Պետրոսեան – Ատենապետ
- Ստեփան Գրգեաշարեան – Փոխատենապետ
- Ճոն Մարգարեան – Ատենադպիր
- Լօրա Արթինեան – Գանձապահ
- Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան – Խորհրդական
- Գեորգ Չափրագեան – Խորհրդական
- Վահէ Պոյաճեան – Խորհրդական

Ժողովին առցանց մասնակցեցան նաեւ ծուխերու քահանայ հայրերը եւ Սուրբ Երրորդութիւն եւ Ս. Աստուածածին եկեղեցիներու Ծխական Խորհուրդներու ատենապետները: Սրբազան հայրը եւ քահանայ հայրերը մանրամասն զեկուցեցին իրենց տարած միամետայ աշխատանքին մասին: Ժողովը նաեւ վաւերացուց Թեմական Պատգամաւորական Ժողովի Հայերէն եւ Անգլերէն ատենազրոյցիւնները:



Եշ., 16 Յունիս – Սրբազան հայրը նախագահեց Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոնի խնամակալ մարմնի հերթական ժողովին, որուն մասնակցեցաւ նաեւ նորանշանակ արհեստավարժ հաշուապահ Պրն Իվան Օհաննէսեան որպէս լիիրաւ անդամ: Ժողովը զբաղեցաւ նաեւ Կեդրոնի ապագայ ծրագիրներու մանրամասնութիւններով:

Շբ., 18 Յունիս – Սրբազան հօր հովանաւորութեամբ Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ մէջ տեղի ունեցաւ աննախադէպ ձեռնարկ մը, «Աղօթքի Զօրութիւնը» թեմայով, կազմակերպութեամբ Առաջնորդարանին: Ձեռնարկը ի գործ դրուեցաւ երկու տաղանդաւոր արուեստագէտներու՝ Տիկին Մարիաննա Պօղոսեանի եւ Պրն Պօղոս Քելէշեանի կողմէ, որոնք կատարեցին նաեւ հանդիսավարութիւնը: Այս երկու երիտասարդ ուժերը կարողացած էին ի մի խմբել երիտասարդ տաղանդներ եւ անոնց կատարումները ներդաշնակել, 100-է աւելի հանդիսատեսներու փոխանցելով իմաստը աղօթքին եւ անոր զօրութեան: Դժուար այս թեման բնականաբար մարտահրաւեր մըն էր թոյլ չը տեսլական ունեցող այս երկու արուեստագէտներուն համար: Անոնք կարողացան մարտահրաւերը յաղթահարել:



Բացման խօսք եւ այլ յայտարարութիւններ կատարեցին երկու հանդիսավարները, մին՝ Հայերէնով, միւսը՝ անգլերէնով: Նախքան Սրբազանը հրաւիրելը տալու համար իր երկկէզու պատգամը՝ հանդիսավարները հետեւեալը պատգամեցին.

Մերօրեայ համաշխարհային այս փոխադարձութեամբ տարերային դէպքերու և իրադարձութիւններու յորձանուտին մէջ՝ եկուր եւ տես, որ մարդկային մեր կերպարանքը ամէն վայրկեան կ'ենթարկուի տեսակ-տեսակ փորձութիւններու, դիմակայելով կամ տանուլ տալով, շտկուելով կամ քայքայուելով, վեր յանդիմանելով կամ զգետնուելով, բազմապատկուելով կամ աղքատանալով, սիրելով կամ անսեր, Աստուծով կամ անաստուած, աղօթքով կամ ներքուստ՝ համար:

Եւ երևի թէ այդ իրադարձութիւններուն համարժեք և անկործան կերպով արձագանքելու համար՝ միակ տարբերակը զինուիլն է, բառիս ուղղակի թէ՛ անուղղակի իմաստներով և կամ սրտէ սիրտ՝ անպատենէշ կամուրջներու հաստատումն է՝ զօրաւոր սիրոյ աղօթքի հրաշագործ ուժով»:



Յապատումներով, կը մեջբերենք Սրբազան հօր պատգամէն «Այն օրէն, երբ Մարդը գիտակցեցաւ իր ուրոյն գոյութեան եւ իր տկարութիւններուն, սկսաւ գերագոյն ոյժ մը փնտռել: Յաճախ այդ ուժը եղաւ բնութեան տարր մը ինչպէս Արեւը, ջուրը, բարձունքներ եւ այլն: Այս առաջնորդեց մարդը ի վերջոյ գերագոյն ոյժի մը, որ նիւթէն վեր էր, ոյժի մը, որ յաւիտենական էր: Այս գերագոյն ոյժին հետ հաղորդակցութեան միջոցը **աղօթքն** է, որը իրականութեան մէջ երկխօսութիւն մըն է անհատին եւ իր արարչին հետ:

Խոկումը, խօսքը, երաժշտութիւնը, շարժումը, պարը, խունկը սրբապատկերները, այս բոլորը միջոցներ են մթնոլորտ մը ստեղծելու որոնք մարդը կ'առաջնորդեն կապուելու կամ միանալու իր ստեղծիչին հետ:

Ըստ Քրիստոնէութեան, Աստուած Սուրբ է եւ մենք չենք կրնար յարաբերիլ Աստուծոյ հետ եթէ սրբուած, մաքրուած չըլլանք: Աստուծոյ սրբութեան դիմաց, երբ մարդ կը գիտակցի իր մեղաւոր ըլլալու հանգամանքին, բնականաբար երկիւղով կը լեցուի իր Երկնաւոր Հօր նկատմամբ:

Աղօթքը մարդու անասան հաւատքն է Աստուծոյ նկատմամբ: Քրիստոնէան կը հաւատայ որ մարդ արարծը Աստուծոյ գլուխ գործոցն է եւ որ կը վայելէ իր երկնաւոր Հօր սէրը. սէր մը, որ պիտի մղէր իր միաձին Որդին զոհելու խաչին վրայ, փրկելու համար մարդկութիւնը:

Աղօթքը մարդու ամբողջական միացումն է Աստուծոյ հետ, աղօթքը կը պահանջէ ամբողջական կեդրոնացում, անջատում այս ֆիզիքական աշխարհէն: Անիրաւ Դատաւորի առակին մէջ եղող այրի կնոջ օրինակով, Յիսուս կը թելադրէ անդադար աղօթել (Ղուկ ԺԸ 1-8), իսկ Փարիսեցոյ եւ Մաքսաւորի առակով (9-14 համարներ) կը զգուշացնէ Աղօթքի փոխարէն ինքնագովութեամբ զբաղուել:

Աղօթքը միայն խնդրանք չէ՝ այլ նաեւ շնորհակալութիւն. գոհութիւն եւ փառաբանութիւն Աստուծոյ: Աղօթքը չի վերաբերիր միայն անձին, այլեւ իր հարազատներուն, ընկերներուն, անձանօթներուն մինչեւ իսկ իր թշնամիներուն: Յիսուս զինք խաչողներուն համար կ'ըսէ՝ Հայր, ներէ՛ անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ինչ կ'ընեն» Ղուկ ԻԳ 34: Աղօթքը երկխօսութիւն է Աստուծոյ հետ ոչ միայն խօսքով՝ այլեւ գործով: «Խօսքը գործադրողներ եղէք, եւ ոչ միայն լսողներ: Ի՞նչ օգուտ ունի, եղբայրներս, եթէ մէկը ըսէ թէ հաւատք ունի սակայն գործեր չունենայ» (Յակոբ թուղթ Ընդհ Ա 22; Բ 14):

Պօղոս Քելէշեան մեներգեց Arvo Part-ի Հայր Մերը: Նարեկագէտ Տոթթ Յարութիւն Ճեպէճեան հակիրճ



սակայն կուռ տողերու մէջ ծանօթացուց Նարեկացի եւ անոր անգուգական աղօթքները: Համայնքի ճանչցուած եւ գնահատուած ասմունքող Մանուկ Կոտոյեան ասմունքեց եւ ճշգրտօրէն մեկնաբանեց Նարեկացիի աղօթքներէն մին: Արի եւ Ալին Եափուճեան եւ Պօղոս Քելէշեան եռաձայն երգեցին Նարեկացիի մէկ աղօթքը երաժշտութիւն՝ Ա. Ալեքսանեանի: Մարիաննան եւ Պօղոսը հրաւիրած էին երկու ոչ Հայ բարձրորակ արուեստագէտներ յանձինս Սիտնիաբնակ Բոպրթ Մէք-ի (Ջութակ) եւ Ատրլէյտէն՝ Branko Lovrinov-ի(Թէնօր): Արհեստավարժ այս արուեստագէտներէն Բոպրթ Մէքը, ջութակի վրայ մեկնաբանեց Albert Hay Malotte-ի Տերունական աղօթքը եւ ընկերակցեցաւ Պրանքոյի, որ իր առինքնող ձայնով թնդացուց եկեղեցոյ պատերը, երգելով Paul Francis Webster-ի «I'll walk with God»ը եւ St Thomas Aquinas-ի «Panis Angelicus» կամ «Հրեշտակներու Հացը» աղօթքը: Յայտնենք որ այս արուեստագէտը բազում օփերաներու մէջ դերեր վերցուցած է ինչպէս Puccini-ի Madama Butterfly-ի, Mozart-ի La Clemenza di Tito-ի եւայլն: Արդէն միջազգային համբաւի տիրացած սիրելի Մաշա Մնջոյեանը իր յատուկ ոճով մեկնաբանեց Ֆրանց Շուպերթի Ave Maria-ն իսկ բազմատաղանդ սփրանօ Մարիաննա Պօղոսեանը մեներգեց Վերտիի «La Vergine Degli Angeli»ն արժանանալով ներկաներու ծափողոյցներուն: Յայտագիրը պատրաստողները չէին մոռցած նոր սերունդին ալ բաժին տալ այս հոգեպարար ձեռնարկին մէջ: Ս. Յարութիւն Եկեղեցոյ Կիրակնօրեայ Վարժարանէն 3 աշակերտներ, յանձինս Անճելինա Սեդրակեանի, Բալիկ Կեօզուգարայեանի եւ Արէն Մերոբի կատարեցին եզրափակիչ խմբերգը Հայերէնով՝ Ազնաւուր-Կարվարենցի «Մուրբ Տիրամայր» կամ Ave Maria-ն:

Հանդէսէն ետք արուեստագէտները հիւրասիրուեցան Առաջնորդարանի սրահին մէջ, ուր հանճարեղ Բոպրթ Մէք զմայլեցուց ներկաները իր ջութակի ելոյթներով: Փարոսի խմբագրութիւնը կը շնորհաւորէ Մարիաննա Պօղոսեանն ու Պօղոս Քելէշեանը իրենց մտադրացումին եւ ղեկավարած այս աննախընթաց հանդիսութեան համար:



Կիր., 18 Յունիս – Սրբազան Հայրը Սուրբ Յարութին եկեղեցւոյ մէջ, յընթացս Պատարագի, օրհնեց նորընտիր ծխական խորհուրդը, որոնք, ծնկաչոք, իրենց ուխտը կատարեցին հաւատարիմ մնալու եւ անսակարկ ծառայելու եկեղեցւոյ եւ Համայնքին: Սրբազանը նաեւ իր օրհնութիւնը տուաւ չորս երիտասարդներու, յանձինս՝ Արգինա




Սուրատեանի, Բլարա Նաճարեանի, Պօղոս Քելէշեանի եւ Ճէյմի Թրափանիի, որոնք Հայաստան պիտի մեկնին մասնակցելու համար Սայր Աթոռի կազմակերպած Յուլիս 2022-ի երիտասարդական բանակումին:

Փարոսի խմբագրութիւնը կը շնորհաւորէ Ս. Յարութին եկեղեցւոյ Ծխական Խորհուրդը, նաեւ բարի ճանապարհ եւ յաջող բանակում կը մաղթէ մեր չորս երիտասարդներուն:



Կիր., 18 Յունիս – Սրբազան Հայրը եւ դիւանապետ Նշան Պասմաճեան, Առաջնորդարանին մէջ ընդունեցին «The Hidden Map» ֆիլմի բեմադրիչ Տիկին Անի Յովհաննիսեան-Գեորգեանը, ընկերակցութեամբ Պրն Հերոս Տիլանչեանի: Տիկին Յովհաննիսեան-Գեորգեան դուստրն է պատմագետ Փրոֆ Բիչըրտ Յովհաննիսեանի եւ քոյրը՝ անկախ Հայաստանի առաջին արտգործ նախարար Բաֆֆի Յովհաննիսեանի: Տիկին բեմադրիչը լայն տեղեկութիւն տուաւ Արեւմտահայաստանի մէջ իր կատարած նկարահանումներուն մասին, որոնք վկայութիւններ են Թուրքիոյ կողմէ իրագործուած մշակութային ցեղասպանութեան: Ան մեծ գովեստով արտայայտուեցաւ Հայկական

Ֆիլմի Փառասօնին մասին, որուն ընթացքին ցուցադրուեցաւ իր պատրաստած ֆիլմը: Տիկին Գեորգեան ֆիլմի DVD-ն նուիրեց Սրբազան հօր: Աւարտին, Տիկինը, կարճ ժամանակով, այցելեց Սուրբ Յարութին եկեղեցի:



Ուրբ., 24 Յունիսի երեկոյեան, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան հօր, կազմակերպութեամբ Համազգայինի Գրական Գեղարուեստական յանձնախումբին, ներկայութեամբ Շրջանային Վարչութեան կազմին, մասնակցութեամբ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանին, Արժ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեանին, Վերապատուելի Գրիգոր Եումուշաքեանին

եւ եօթանասունի շուրջ հայորդիներու, եկեղեցւոյ Էտկարեան սրահին մէջ Նշան Պասմաճեան դասախօսեց «Քեսապ Հայկական Գիւղը, Պատմութիւն, Մշակոյթ, Յուշեր» նիւթով: Տիկին Նորա Պասթաճեանի մտայղացումով բժախնդրօրէն պատրաստուած էր յատուկ յայտագիր, ուր նաեւ նշուած էր բանախօսին



կենսագրությունը: Հանդիսավարուհի Տիկին Ազնիւ Ինկիլիզեանի բացման խօսքէն ետք բեմ հրաւիրուեցաւ բանախօսը, որ նկարներու եւ քարտէսներու ընկերակցութեամբ, հակիրճ բայց յստակ պատկերը ներկայացուց Հայկական Քեսապի դարերու վրայ երկարող պատմութեան, վարկածներ եւ փաստեր ներկայացնելով շրջանին մէջ հայ բնակչութեան մասին, լուսարձակի տակ առնելով փինիկեան աղբիւրները, Հոմերոս պատմաբանը, Տիգրան Մեծի կայսրութեան պատմութիւնը, Անտիոքի շրջանի Հայոց դարաւոր ներկայութիւնը, Յովհան Ոսկեբերանը, Խաչակիրներ, Յարանուանութիւններու եւ Կուսակցութիւններու

կարելոր աշխատանքները, Ատանայի ջարդերը, Քեսապի Ուսումնասիրաց Ընկերութիւնն ու Ազգային Ճեմարանը, Մեծ Եղեռնի եւ 2014-ի Քեսապի պարպումը եւայլն: Դասախօսը առիթ տուաւ Տէր Միւռն Աւետիսեանին, որ ականատեսի վկայութիւնը տայ որպէս Քեսապի այդ օրերուն հոգեւոր հովիւ եւ շրջանի Շտապօգնութեան Յանձնախումբի ատենապետ: Տէր Միւռն հակիրճ բայց յստակօրէն ներկայացուց այդ օրերուն պատահած դէպքերը եւ կատարուած շտապօգնութեան գործունէութիւնը, բարձրօրէն գնահատուելով ներկաներէն եւ Սրբազան հօրմէն:

Դասախօսը խօսեցաւ Քեսապի պատմութեան համար 19րդ դարէն մինչեւ օրս կարելոր թուականներու եւ դէպքերու մասին ինչպէս են 1917-ին Արարայի (Պաղեստին) յաղթական ճակատամարտէն ետք Հայկական Լեգէոնին ծառայող Քեսապի կամաւորներու վերադարձը Քեսապ եւ 1919-1922 մղուած հերոսամարտին, Քեսապի անմահ Տայիին



(Ովսիա Սաղտճեան) սիրագործութեանց, որոնց շնորհիւ ապահովութիւնը վերադարձաւ Քեսապին եւ մարտունակութիւնը՝ Քեսապցիին: Ան խօսեցաւ Կիլիկիոյ պարպումին, Հաթայի տարիներուն (1937-1940), Հայաստան ներգաղթին հետեւանքներուն, 1961-ի ՀՅԴ-ի Սուրիոյ ղեկավարութեան ձերբակալումին եւ անոնց հետեւանքներուն մասին: Ան նաեւ անդրադարձաւ Քեսապի բարբառին, «լեզուի շարահիւսակն իւրայատկութիւններուն եւ անոր բարդ ու խրթին իրավիճակին», տալով օինակներ: Բանախօսը ներկայացուց նաեւ յուշերու պատառիկներ, ինչպէս եւ ձեռնարկը «ուրախ աւարտ – happy end»- ով վերջացնելու համար, ան պատմեց այն որսորդական սուտիկ պատմութիւններէն նմուշներ, որոնք երեսակայական գլուխ գործոցներ են եւ որոնց մէկ մասը բանահիւսութենէն արդէն անցած է գրականութեան:

Փակման խօսքն ու աղօթքը կատարեց Սրբազան հայրը: Իր խօսքին մէջ ան դրուատանքով արտայայտուեցաւ Առաջնորդարանի Դիւանապետ Բարեշնորհ Նշան Մարկաւազ Պատմաճեանի Քեսապին համար ամէն զոհողութեան պատրաստակամութեան, դասախօսութեան որակաւոր պատմական տեղեկատուութեան, Քեսապի կարելոր դերին եւ Քեսապցիի ծառայասիրութեան, հողէն իր ուժը ստանալուն եւ ուսումնատենչութեան: Սրբազանը մեծապէս գնահատեց Գրական-Գեղարուեստական Յանձնախումբի այս նախաձեռնութիւնը եւ կոչ ուղղեց կազմակերպելու նման ձեռնարկներ Կիլիկիոյ տարբեր գաւառներու եւ շրջաններու պատմութեան ու մշակոյթին առնչուած:

Երեկոն իր լրումին հասաւ Սրբազան հօր Պահպանիչով:

Ձեռնարկէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, ուր հրամցուեցաւ Քեսապի տոհմիկ ձեռով «Բիկիէդ» պատրաստուած Տիկին Սոնա Աշըքեանի կողմէ:

Ձեռնարկը կարելի է որակել «համտեւ Քեսապի քաղցրութեան»:

Կիրակի 26 Յունիս – Այս տարի եւս 12րդ դասարանի շրջանաւարտներ հրաւիրուած էին Սուրբ Յարութին եկեղեցի ստանալու համար Սրբազան հօր օրհնութիւնը: Երկու աշակերտուհիներ պարգեւատրուեցան, Միլենա Գրիգորեան, պետական շաբաթօրեայ վարժարանէն, Հայերէնի բարձրագոյն նիշը ապահոված ըլլալուն համար եւ Սօնիա Նազարեան, Գօլստըն Ճեմարանէն, որպէս All Round achiever: Սրբազան հայրը, Թեմականի ատենապետ Պրն Սարգիս Տէր Պետրոսեան, Ս. Յարութին եկեղեցոյ ծխական խորհուրդի ատենապետ Պրն Պետրոս Զօրլու Առաջնորդարանին մէջ ընդունեցին աշակերտները եւ խօսակցեցան անոնց հետ իրենց հետաքրքրութեանց եւ ապագայի ծրագիրներուն մասին: Բժշկութիւն, հոգեբանութիւն եւ ֆինանսներու մէջ մասնագիտացում էր աշակերտներուն պատասխանը: Սրբազան հայրը դրուատանքով արտայայտուեցաւ աշակերտներու ձեռքբերումներուն մասին: Ան հրաւիրեց երաշխաւորներ՝ Տոքթ Արթին Ճեպէճեանը եւ Տոքթ եւ Տիկին Կարօ եւ Լօրա Արթինեանները յանձնելու պարգեւները Սօնիա Նազարեանին եւ Միլենա Գրիգորեանին: Իր երախտագիտութեան խօսքին մէջ Միլենա յայտնեց. « Կը հաւատամ որ ինչ որ կը պատահի մեր կեանքին մէջ Աստուծոյ ձեռքը կայ անոր մէջ, Ան է որ մեզ կ'առաջնորդէ մեր կեանքի ճանապարհին մէջ մեղքի այս աշխարհին մէջ: Ծնած եմ եւ ապրած Հայաստան, դժուար էր հասկնալ թէ ինչու Աւստրալիա եկած էի: Այստեղ եկայ 2019-ին հանդերձ ընտանեօք եւ միակ կապը որ ունէի իմ լեզուիս հետ՝ այն առիթն էր որ ինձի տրուած էր Հայ համայնքին եւ Աւստրալական պետութեան կողմէ որ կարենայի Հայերէնը ընտրել որպէս HSC-ի նիւթ: Ապրելով օտար երկրի մէջ եւ կարենալով ապրիլ համայնքիս մէջ որ կ'օգնէ ինձի տրվելու լեզուս, լսելու լեզուս, ծիծաղելու իմ լեզուովս, եւ Աստուած փառաբանելու իմ լեզուովս, բանալին է չկորսնցնելու մշակոյթս լեզուս եւ ինքնութիւնս, երեք բառեր եւ երեք աշխարհներ, որոնք կազմած են իմ բնութիւնս: Որպէս Հայերէնի ուսուցիչ HSC-ի աշակերտներուն, Պրն Մանուկ Տէմիրճեան, Տնօրէն ՀԲԸՄ Ալեքսանտր Վարժարանի, իր երախտագիտութիւնը յայտնեց Սուրբ Յարութին եկեղեցոյ այս առիթին եւ գնահատելու աշակերտութիւնը իրենց յաջողութեանց համար: Ան իր զօրակցութիւնը յայտնեց ապահովելու յաւելեալ աշակերտներ տեղեկանալու որ ներկայ ըլլան յաջորդ տարիներուն:



Գր. 29 Յունիս – Ինչպէս ամէն ամսուան վերջին Չորեքշաբթին, Յունիսի այս օրն ալ տեղի ունեցաւ Առաջնորդարանի կազմակերպած առցանց դասախօսական շարքին 11-րդը, նախագահութեամբ Սրբազան հօր: Բանախօսն էր, Վենետիկի Սուրբ Ղազար Կղզիէն, Մխիթարեան Միաբանութեան երիտասարդ վարդապետ Հայր Համազասպ Քէշիշեանը: Դասախօսութեան կը հետեւէին Փարոսի ընթերցողներ՝ Միտնիէն, Մելպուրնէն, Երեւանէն, Լոնտոնէն, Տուպայէն, Լոս Անճելըսէն եւ Նիւ Եորքէն:



Գր. 29 Յունիս – Ինչպէս ամէն ամսուան վերջին Չորեքշաբթին, Յունիսի այս օրն ալ տեղի ունեցաւ Առաջնորդարանի կազմակերպած առցանց դասախօսական շարքին 11-րդը, նախագահութեամբ Սրբազան հօր: Բանախօսն էր, Վենետիկի Սուրբ Ղազար Կղզիէն, Մխիթարեան Միաբանութեան երիտասարդ վարդապետ Հայր Համազասպ Քէշիշեանը: Դասախօսութեան կը հետեւէին Փարոսի ընթերցողներ՝ Միտնիէն, Մելպուրնէն, Երեւանէն, Լոնտոնէն, Տուպայէն, Լոս Անճելըսէն եւ Նիւ Եորքէն:

Սրբազան հոր բացման աղօթքէն ետք հանդիսավար Նշան Պասմաճեան ներկայացուց Հայր Սուրբին հակիրճ կենսագրութիւնը եւ հրաւիրեց զինք տալու իր պատգամը: Հայր Սուրբը, որ այժմ վանահայրն է Սուրբ Ղազարի եւ Միաբանութեան ընդհանուր քարտուղարը, մանրամասնութեամբ անդրադարձաւ Միխիթար Սեբաստացիի կեանքին, գործունէութեան եւ առաքելութեան, հոգեւորի կողքին անոր ազգային մտահոգութիւնները եւ Միխիթարեան Հայրերու բերած նպաստը Հայ գրականութեան, պատմութեան, արուեստին, մշակոյթին, հրատարակչական եւ կրթական աշխատանքներուն: Հայր Սուրբը անդրադարձաւ նաեւ միաբանութեան դիմագրաւած մարտահրաւերներուն եւ զանոնք յաղթահարելու համար տարուած գովելի ճիգին: Աւարտին, Հայր Սուրբը պատասխանեց ակնդիրներու բոլոր հարցումներուն:

Սրբազան Հայրը դրուատեց Միխիթարեան Միաբանութեան տարած եւ շարունակուող աշխատանքը ի սպաս Հայ ազգին եւ Հայրենիքին, շնորհակալութիւն յայտնեց Հայր Համազասպին իր այս հոյակապ դասախօսութեան համար, ուր խօսքին կ'ընկերանար նաեւ նկար: Ան յիշեց իր այցելութիւնը Սուրբ Ղազար եւ զմայլանքը ի տես այն հոգեւոր ու մշակութային հարստութեան որ ամբարուած էր այդ փոքրիկ Հայաստանին մէջ: Ան նաեւ անդրադարձաւ մարտահրաւերներուն եւ իր ուրախութիւնը յայտնեց զանոնք յաղթահարելու համար տարուած դրական աշխատանքներուն:

Մէկուկէս ժամ տեւած դասախօսական ձեռնարկը իր լրումին հասաւ Սրբազան հոր աղօթքով:

ԿԻՅԱՆՑ ԼԱՐԱՆՔԿԵՐՆ ԵՐԵՎԱՅ
 Կազմակերպութեամբ
 Մասրաթիոյ եւ Նոր Չեղանոցի
 Հայոց Առաջնորդարանին

Նիւթ
 Միխիթար Սեբաստայր եւ
 Միխիթարեան Միաբանութիւնը
 պատմական կոյնեցք եւ
 մարտահրաւերներ

Զեկուցարէր՝
 Համազասպ Կեօղացեալ Թ. Դ. Կեանք

Գորերշաբթի 29 Յունիս 2022-ի
 երեկոյան ժամը 7.00-ին

LECTURE EVENING
 by ZOOM
 Organized by the Diocese of
 the Armenian Church of
 Australia & New Zealand

Topic: Abbot Melchitar
 & the Mekhitarist Brotherhood
 Historical Perspective
 & Challenges

Presenter:
 Very Reverend Father
 Hamazasb Keshishian

Register with: Mr Nishan Basmajian
 d@cese@armenian.com.au
 Wednesday 29 June at 7pm



ԵՁ., 30 Յունիս – Դիւանապետ Նշան Պասմաճեան առցանց մասնակցեցաւ Նիւ Սաութ Ուելլզ Էքիւմենիք Խորհուրդի կազմակերպած եկեղեցապետերու ժողովին, որ տեղի ունեցաւ Յոյն Ուղղափառ Առաջնորդարանին մէջ Սարի Հիլզ: Ժողովին ամենէն հետաքրքրական եւ զարգացուցիչ մասն էր Յոյն Ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդ Սաքարիոս Արքեպիսկոպոսին խօսքը, որուն բնաբանն էր «Լուսապատկեր մը –

Տեսութիւն Աւստրալիոյ Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ համար - A Spectrum: Vision for the Greek Orthodox Church in Australia»: Մաքարիոս Արքեպիսկոպոսի տեսլականը 5 տարբեր բնագաւառներէ ներս էր՝ Հովուական (Pastoral), Ընկերային (Social), Կրթական (Educational), Մշակութային (Cultural), Հոգեւոր (Spiritual): Արքեպիսկոպոսը անդրադարձաւ կիրակնօրեայ վարժարաններու խաղացած բայց մանաւանդ խաղալիք դերին պահպանելու համար քրիստոնէայ ինքնութիւնը եւ զօրացնելու քրիստոնէական հաւատքը: Ան նաեւ խօսեցաւ Յոյն Աստուածաբանական Կաճառին կարեւորութեան մասին մանաւանդ կարող եկեղեցականներու պատրաստութեան համար: Կարեւորեց դերը հոգեւոր երաժշտութեան: Հոգեւոր աւիշի համար ան անդրդարձաւ եկեղեցիներու թիւի աճումին եւ Առաջնորդարաններու մեղուափեթակի վերածման: Արքեպիսկոպոսը կարեւոր գտաւ Առաքելներու աշխատանքը շարունակելը, դուրս գալ ժողովուրդին մէջ, բան մը որ իրենք սկսած են կատարել Յոյն համայնքին մէջ: Արդէն մշակութային թանգարան մը կառուցման ձեռնարկած են յոյն հոգեւոր եւ ազգային ժառանգը պահելու համար: Յոյն եկեղեցին այս աշխատանքը կը տանի Աւստրալիոյ 3 քաղաքներու մէջ՝ Սիտնի, Մելպուրն եւ Ատըլէյս:

Մասնակիցները մեծապէս գնահատեցին յոյն ուղղափառ եկեղեցապետին տարած աշխատանքը եւ զայն նկատեցին ուղեցոյց քրիստոնէայ որեւէ եկեղեցւոյ համար:

Ժողովը զբաղեցաւ նաեւ Պսակաձեւ Ժահրէն ետք Եկեղեցիներու տանելիք աշխատանքներով եւ ընտանիքներու մէջ տեղի ունեցած վայրագութեանց առաջը առնելու միջոցներու որոնման հարցերով:



ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻՎՇՆԷՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ (ԵԽՀ) ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ



Մայիս 30-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ ընդունեց ԵՀԽ-ի Հայաստան գտնուող պատուիրակութիւնը՝ ուղեկցութեամբ ԵՀԽ հայաստանեան Կըր սեղան հիմնադրամի գործադիր տնօրէն Կարէն Նազարեանի: Նորին Սրբութիւնը, ողջունելով պատուիրակութեան անդամները, իր գնահատանքը յայտեց ԵԽ-ին 44-օրեայ պատերազմի ընթացքին Հայաստանին եւ Արցախին ցուցաբերած զօրակցութեան համար: Ան ներկայացուց յետպատերազմեան ծանր ու դժուարին իրավիճակը:

Հայոց Հայրապետը անդրադարձաւ Ադրբեջանի բոլոր տեսակի սանձարձակութեանց, հայկական մշակութային-կրօնական ժառանգութեան ոչնչացման եւ իւրացման փաստերուն: Վեհափառը պատասխանեց նաեւ հիւրերու հարցերուն, որոնք կ'առնչուէին արցախահայութեան անվտանգ եւ խաղաղ կեանքի ապահովման ընդհանրապէս:



ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինութեամբ Յունիսի 1-էն Վրաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Կիրակոս վարդապետ Դաթեանը կը նշանակուի Վրաստանի հայոց թեմի Առաջնորդ:



ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻՎՇՆԷՆ

Յունիս 2-ին Վեհափառը ընդունեց Հայաստան ժամանած Յունաստանի Հանրապետութեան ազգային պաշտպանութեան փոխնախարար Նիկոս Յարդալիասը եւ անոր գլխաւորած պատուիրակութիւնը, ուղեկցութեամբ ՀՀ ՊՆ փոխնախարար Կարէն Բրուտեանի: Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ուրախութիւնը յայտնեց երկու երկիրներու ռազմական գերատեսչու-

թիւններու միջեւ ձեւաւորուած սերտ փոխգործակցութեան առնչութեամբ: Ան անդրադարձաւ Ադրբեջանի ոսնձգութիւններուն եւ չդադարող սպառնալիքներուն:

Փոխնախարարը, շնորհակալութիւն յայտնելով Նորին Սրբութեան ջերմ ընդունելութեան, ընդգծեց, որ հայ եւ յոյն ժողովուրդների բարեկամութիւնը կու գայ դարերու խորքէն: Ան նշեց որ Յունաստանի պաշտպանութեան նախարարութիւնը պատրաստակամ է ամէն ջանք ներդնելու բարեկամութիւնը աւելի խորացնելու համար եւ աջակցելու Հայաստանին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐ ԵՒ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Յունիս 4-ին Գարեգին Բ ընդունեց «Ճշմարտութեան եւ արդարադատութեան կեդրոնի» կողմէ կազմակերպուած «Մարդու իրաւունքներ եւ պատասխանատուութիւն. պատերազմի հետեւանքները» առաջին միջազգային համաժողովի մասնակիցները: Հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը՝ «Ճշմարտութեան եւ արդարադատութեան կեդրոնի» նախագահ Գոռ Մնացականեանը տեղեկացուց, որ Հայաստան ժամանած են իրաւաբաններ եւ միջազգային իրաւունքի առաջատար փորձագէտներ 16 երկրներէ՝ քննարկելու 44-օրեայ պատերազմին արցախահայութեան, ռազմագերիներուն, տեղահանուած անձանց իրաւունքներու ոսնահարումներն ու միջազգային արդարադատութեան առնչուող խնդիրները:



Ընդգծելով միջազգային գիտաժողովին կարեւորութիւնը, Վեհափառը յոյս յայտնեց, որ իրաւաբաններն ու միջազգային իրաւունքի առաջատար փորձագէտները հաղորդ կը դառնան Հայաստանի ու Արցախի առջեւ ծառայած մարտահրաւերներուն եւ միջազգային հաթակներուն մէջ կը պաշտպանեն հայ ժողովուրդի արդար իրաւունքները: Ան անդրադարձաւ նաեւ արցախեան 44-օրեայ պատերազմին եւ անոր բոլոր հետեւանքներուն:

Հայոց Հովուապետը նաեւ իր գնահատանքը փոխանցեց գիտաժողովի կազմակերպիչներուն եւ մասնակիցներուն եւ պատասխանեց նաեւ հիւրերու հարցերուն:



ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Յունիս 8-ին, Մայր Աթոռի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» մատենադարանին մէջ, տեղի ունեցաւ վարդապետական թեզի բանաւոր պաշտպանութիւն: Մասնաւոր վարդապետական աստիճան ստանալու համար թեզ պաշտպանեց Կ.պոլսի հայոց պատրիարքութեան միաբան Հոգեշնորհ Տ. Յարութիւն արեղայ Տամատեանը՝ «Կ. Պոլսոյ պատրիարքութեան վանական/դպրեվանական կեանքը» թեմայով: Յանձնաժողովը կը նախագահէր Տաւուշի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս

Գալստանեանը: Յանձնաժողովի կազմի մէջ ընդգրկուած էին նաեւ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայէլ Արքեպիսկոպոս Աջապահեանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մկրտիչ

Եպիսկոպոս Պոռշեանն ու Մասեացուն թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գեորգ Եպիսկոպոս Սարոյեանը:

Յաւարտ բանաւոր պաշտպանութեան, քննիչ յանձնախումբը արժանի համարեց Հոգեշնորհ Տ. Յարութին արեղայ Տամատեանին շնորհելու մասնաւոր վարդապետութեան աստիճան:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԵՆԵՏԻԿԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ



Յունիս 9-ին, Վեհափառ Հայրը ընդունեց Երոպայի խորհուրդի «Ժողովրդավարութիւն՝ իրաւունքի միջոցով» երոպական յանձնաժողովի (Վենետիկի յանձնաժողով) նախագահ Քլեր Պազի-Մալորը՝ ուղեկցութեամբ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանեանի:

Հանդիպման սկզբում Պրն. Դիլանեանը Նորին Սրբութեանը ներկայացուց ՀՀ-եան ՄԴ-ի եւ Վենետիկի յանձնաժողովին ջերմ յարաբերութիւնները՝ յոյս յայտնելով, որ այս այցը նոր թափ կու տայ այդ համագործակցութեան:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր գոհունակութիւնը յայտնեց ՀՀ դատաիրաւական համակարգի եւ

Վենետիկի յանձնաժողովի միջեւ առկայ սերտ գործակցութեան համար:

Վեհափառ Հայրապետն անդրադարձաւ նաեւ արցախեան 44-օրեայ պատերազմի հետեւանքերին, գերիներու վերադարձման հարցին, Արցախի ժողովուրդի անվտանգութեան խնդրին եւ ոտնահարուած իրաւունքներուն, ինչպէս նաեւ Ադրբեջանի կողմէ տարուող հայատեաց քաղաքականութեանը, հայկական հոգեւոր-մշակութային ժառանգութեան նկատմամբ ոտնձգութիւններուն:

Զրոյցի ընթացքին շեշտ դրուեցաւ Եկեղեցւոյ առաքելութեան մարդու իրաւունքներու եւ արդարութեան պաշտպանութեան գործին մէջ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԵՐԸ

Յունիս 9-ին Գարեգին Բ. ընդունեց ՀՀ Գեղարքունիքի մարզպետ տիար Կարէն Սարգսեանը, մարզի համայնքապետերը, մարզին մէջ սպասաւորող հոգեւորականները, առաջնորդութեամբ Գեղարքունիքի թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Պարթեւ վարդապետ Բարսեղեանի:

Հայոց Հովուապետը գոհունակութիւն յայտնեց թեմի ու մարզի միջեւ հաստատուած արդիւնաւետ համագործակցութեան համար, որը, ըստ Նորին Սրբութեան, պիտի նպաստէ մարզի շինացմանն ու ազգաբնակչութեան բարօրութեանը, յետպատերազմեայ մարտահրաւերներու յաղթահարմանը եւ ծառայած խնդիրներու լուծմանը եւ իր գնահատանքը արտայայտեց առաջնորդական տեղապահին իրականացուած աշխատանքներուն եւ նուիրեալ ծառայութեան համար:



ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ



Յունիս 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ, Վեհափառի հանդիսապետութեամբ, տեղի ունեցաւ շքանշաններու յանձնման արարողութիւն:

Նորին Սրբութիւնը «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» պատուոյ բարձր շքանշան շնորհեց Փոֆէտոր, արեւելագէտ Գուրգէն Մելիքեանին եւ վաստակաւոր ճարտարապետ Արտեօս Գրիգորեանին՝ ի գնահատութիւն հայ ժողովուրդին եւ հայրենիքին մատուցած բազմաթիւն ծառայութիւններուն:

Մեծարեալներուն ծառայութիւններուն անդրադարձան ԵՊՀ Արեւելագիտութեան ֆակուլտետի դեկան, Փրոֆէտոր Ռուբէն Մելքոնեանը եւ ճարտարապետութեան դոկտոր, Փրոֆէտոր Դաւիթ Քերթմենջեանը:

Այնուհետեւ «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողութեամբ բերուեցան Հայրապետական սրբատառ կոնդակներն ու շքանշանները:

Կոնդակին մէջ մասնաւորապէս նշուած է. «Տիրոջ կամքով առիթ

ենք ունեցել անձնապէս ճանաչելու հաւատաւոր հայորդուդ եւ քաջատեղեակ ենք մեր ժողովրդի կեանքում Ձեր մեծ վաստակին: Ծնուելով եւ հասակ առնելով հայ կեանքի աւանդոյթներով հարուստ իրանահայ համայնքում՝ Դուք Ձեր հոգում կրում էք ազգասէր ու հայրենասէր ոգի եւ անկեղծ նուիրում հանդէպ հարազատ ժողովուրդը, որն ամբողջապէս արտայայտել էք գիտական, կրթական ու հասարակական Ձեր երկարամեայ գործունէութեան մէջ:

Այսօր առիթ ունենք անդրադառնալու, որ երկար տարիներ դեկավարելով Երեւանի պետական համալսարանի Արեւելագիտութեան Ֆակուլտետը՝ Դուք գովարժան աւանդ էք բերել մեր երկրում արեւելագիտութեան զարգացման եւ երիտասարդ մասնագէտների պատրաստութեան գործին: Իբրեւ դասախօս եւ Ամբիոնի վարիչ, Դուք հոգածու նուիրումով Ձեր սաների հոգիներում խնամել եւ զօրացրել էք սերը հանդէպ գիտութեան լուսաւոր աշխարհը: Անցնող տասնամեակներին նաեւ հեղինակել էք բազմաթիւ գիտական աշխատութիւններ, կատարել թարգմանութիւններ՝ արժանանալով գիտական բարձր կոչումների ու պարգևների:



Արցախեան հերոսամարտի տարիներին Դուք անսալով Ձեր հոգու կանչին՝ միացաք մեր ժողովրդի ինքնապաշտպանական պայքարին՝ յանուն Արցախում բնակուող հայորդիների ազատ ու անկախ ապրելու իրաւունքի: Ձեզ պէս արիասիրտ հայորդիների խիզախումի ու անձնագոհութիւնների շնորհիւ մեր նորօրեայ պատմութիւնը զարդարուած է յաղթական փառաւոր էջերով, որոնք սերունդէ սերունդ պիտի խանդավառեն մեր ժողովրդին: Արցախին Ձեր ծառայութիւնները Դուք շարունակեցիք նաեւ հրադադարի պայմաններում՝ հիմնելով հիմնադրամ՝ յաջակցութիւն Քաշաթաղի շրջանի բազմազաւակ ընտանիքների»:

Մայր Աթոռի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայեանն ընթերցեց տիար Արտեօս Գրիգորեանին ուղղուած Հայրապետական կոնդակը, ուր մասնաւորաբար ըսուած է. «Ամբողջացնելով Ձեր մասնագիտական կրթութիւնը Երեւանի եւ Մոսկուայի ճարտարապետական բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում՝ Դուք տասնամեակներ շարունակ նախանձախնդիր գործունէութիւն ծաւալեցիք Պատմութեան եւ մշակոյթի յուշարձանների պահպանութեան գործակալութիւնում, որտեղ ստանձնեցիք տարբեր յանձնառութիւններ, ապա նաեւ Գործակալութեան պետի պատասխանատու



պաշտօնը՝ Ձեր կարողություններն ի սպաս բերելով մեր պատմական կոթողների պահպանության ու վերականգնման ազգանուէր գործին:

Ձեր վաստակը հարստացրել էք նաև քաղաքաշինական ոլորտում ստեղծագործական բեղուն գործունեութեամբ՝ հեղինակելով Հայաստանի տարբեր բնակավայրերի բարեկարգման, շէնքերի կառուցման եւ պատմամշակութային միջավայրի պահպանության նախագծեր, ի շարս որոնց՝ Էջմիածին քաղաքի կենտրոնի կառուցապատման եւ բարեկարգման նախագիծը: Ձեր նախագծով կեանքի կոչուեց նաև Տաթևի վանական համալիրի՝ եկեղեցիների եւ կից շինությունների վերականգնման եւ բարեգարդման նախաձեռնությունը, որով նոր շունչ

ստացաւ միջնադարեան վանքը՝ որպէս հռչակաւոր ուխտատեղի մեր հաւատացեալների եւ Հայաստան այցելող հիւրերի համար:

Գնահատանքով ենք անդրադառնում նաև, որ Դուք երկար տարիներ դասաւանդում էք Ճարտարապետութեան եւ շինարարութեան Հայաստանի ազգային համալսարանում՝ կրթօջախի սաներին փոխանցելով Ձեր բազմափորձ գիտելիքներն ու վարպետությունը:

Կոնդակների ընթերցումէն ետք Ամենայն Հայոց Հայրապետը Հայ Եկեղեցւոյ շքանշաններով զարդարեց մեծարեալներու կուրծքը:

Պարգևաբաշխութեան առիթով իրենց սրտի խօսքը ըսին նաև շնորհընկալները՝ բարձր գնահատանքի ու պարգևի համար երախտագիտութիւն յայտնելով Հայոց Հայրապետին:

**ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԱՍՈՒՆՔԸ
ՓՈՒՍԴՐՈՒԱԾ Է ՇՈՂԱԿԱԹԻ ՎԱՆՔ**

Յունիս 16-ին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Յովհաննէս Կարապետի եւ Սուրբ Աթանազիէ եպիսկոպոսի տոնը, որը նաև Էջմիածնի Սուրբ Շողակաթ վանքի ուխտի օրն է:

Սուրբ Յովհաննէս Մկրտչի մասունքն ամփոփող խաչմասունքարանը առաւօտեան Մայր Աթոռէն Սուրբ Շողակաթ վանք տարուեցաւ եկեղեցականներու հանդիսաւոր թափօրով: Թափօրը մինչև Սուրբ Գրիգոր Լուսաւորչի կամար գլխաւորեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մեծագոյն սուրբի մասունքարանով օրհնելով բարեպաշտ ժողովուրդը: Այնուհետև սրբազան մասունքը կրեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայեանը եւ Մայր Աթոռի Եկեղեցական հայեցակարգային բաժնի տնօրէն Գերաշնորհ Տ. Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանը: Մատուցուեցաւ Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Կ. Պոլսի հայոց պատրիարքութեան միաբան Հոգեշնորհ Տ. Յարութիւն վարդապետ Տամատեանը:



Հայր Սուրբը, իր քարոզին մէջ անդրադառնալով տօնի խորհուրդին, կոչ ըրաւ հաւատացեալներուն՝ իբրև փրկութեան լոյսի, փարիլ Հայ Եկեղեցւոյ եւ Սուրբերու օրինակով լլալ քրիստոնէութեան ջատագովներ, աւետարանական սրբությունները պահպանողներ եւ մշտապէս հայցել Սուրբ Յովհաննէս Կարապետի եւ Սուրբ Աթանազիէ եպիսկոպոսի բարեխօսութիւնը հայոց ազգի եւ հայրենիքի համար:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԻՒՐՆԿԱԼԵՑ ԲԱՌՆԱՌԻԼԻ ԵՒ ԱԼԹԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՍԵՐԳԻՅԸ



Յունիս 16-ին, հիւրընկալեց Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ Բառնաուլի եւ Ալթայի միտրոպոլիտ Նորին Սրբազնութիւն Սերգիյ Իւաննիկովի գլխաւորած պատուիրակութիւնը՝ ուղեկցութեամբ Բառնաուլի Ս. Հռիփսիմէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Մաշտոց քահանայ Յակոբեանի: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակութեամբ անդրադարձաւ երկու Եկեղեցիներու եւ ժողովուրդներու միջեւ ձեւաւորուած դարաւոր եղբայրական յարաբերութեան եւ փոխգործակցութեան:

Իր հերթին Բառնաուլի եւ Ալթայի միտրոպոլիտը շնորհակալութիւն յայտնեց Նորին Սրբութեանը Հայաստան իր այցելութեանն աջակցելու համար՝ ընդգծելով, որ

եզակի հնարաւորութիւն է ընձեռնուած հաղորդակցուելու քրիստոնէական հնագոյն երկիրներէն մէկուն սրբավայրերուն եւ հոգեւոր արժէքներուն: Նորին Սրբազնութիւնը Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացուց նաեւ Ալթայի շրջանի հայ համայնքի, Մաշտոց քահանայի հետ ձեւաւորուած սերտ համագործակցութիւնը, անդրադարձաւ հայորդիներու կարեւոր ներդրմանը շրջանի զարգացման գործին մէջ:

Հանդիպմանը խօսուեցաւ աշխարհաքաղաքական բարդ իրավիճակի, Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառայած մարտահրաւերներու եւ չլուծուած անվտանգային խնդիրներու մասին: Նորին Սրբութիւնը նաեւ անդրադարձաւ Դաղիվանքին, որուն հոգեւոր գործունէութիւնը հնարաւոր եղաւ շարունակել շնորհիւ Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Կիրիլ Պատրիարքի միջնորդական ջանքերուն եւ ՌԴ նախագահ Վլատիմիր Փութինի անմիջական հոգածութեան:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԳԼԽԱԻՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

Յունիս 17-ին Վեհափառ Հայրապետը ընդունեց Եւրոպայի խորհուրդի Գլխաւոր քարտուղար Մարիա Պէյչիտովիչ Բուրիչին եւ անոր գլխաւորած պատուիրակութիւնը՝ ուղեկցութեամբ Եւրոպայի խորհուրդի մօտ ՀՀ մշտական ներկայացուցիչ Արման Խաչատրեանին:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընդգծեց, որ ԵՄ Գլխաւոր քարտուղարին այցը Հայաստան տեղի կ'ունենայ երբ մեր ժողովուրդը դժուարին իրավիճակի մէջ կը գտնուի, երբ երկրին առջեւ ծառայած են յետպատերազմեան բազմաթիւ մարտահրաւերներ՝ անվտանգային հարցեր, չլուծուած սոցիալական, տնտեսական ու մարդասիրական խնդիրներ:

Անդրադառնալով 44-օրեայ պատերազմին եւ անոր հետեւանքներուն, Ադրբեջանի մէջ միջեւ օրս պահուող ռազմագերիներուն եւ հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան խնդիրներուն՝ Հայոց Հովուապետը կարեւորեց միջազգային հանրութեան աջակցութիւնը: Նորին Սրբութիւնը խօսեցաւ Ադրբեջանի իշխանութիւններու կողմէն հայկական կրօնամշակութային արժէքներու ոչնչացման քաղաքականութեան մասին, որուն հետեւանքով դեռեւս 1998-2005 թթ. Ադրբեջանի եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութեան մէջ քանդուեցան ու փոշիացուեցան հայկական





քրիստոնեական հնագոյն մշակոյթի շուրջ եօթ հազար պատմական յուշարձաններ՝ խաչքարեր, եկեղեցիներ ու պաշտամունքային այլ շինութիւններ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը յոյս յայտնեց, որ բարեկամ երկրները, միջազգային հանրութիւնը եւ Եւրոպայի խորհուրդը յստակ կեցուածք կը դրսեւորեն մտահոգիչ այս խնդիրների վերաբերեալ եւ քայլեր կը ձեռնարկեն տարածաշրջանն ապակայունացնող երեւոյթներու զսպման, Արցախի ժողովուրդի ազատ, անկախ ու անվտանգ կեանքի ապահովման ուղղութեամբ:

Վեհափառ Հայրապետը նաեւ անդրադարձ կատարեց

հակամարտութեան ընթացքում եւ յետպատերազմեան շրջանում Եկեղեցու գործադրած ջանքերին, ի մասնաւորի՝ տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների հանդիպումներին:

Իր հերթին տիկին Մարիա Պէյլիմովիչ Բուրիչը հաստատեց, որ Վեհափառ Հայրապետի մատնանշած խնդիրները ԵՄ-ի ուշադրութեան կենտրոնն են: Վերջինս յատկապէս կարեւորեց սահմաններու անվտանգութեան, գերիներու վերադարձման, հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանման եւ Արցախի ժողովուրդի անվտանգութեան առաջնահերթութիւնները: ԵՄ Գլխաւոր քարտուղարը ընդգծեց, որ իր հիմնական նպատակն է երկխօսութեան եւ փոխըմբռնման միջոցով ժողովուրդներու ու պետութիւններու միջեւ հաստատել տեւական խաղաղութիւն եւ վերացնել առկայ հակամարտութիւնները: Տիկինը կարեւոր նկատեց նաեւ մշակութային ու կրօնական երկխօսութիւնը՝ ողջունելով խաղաղութեան եւ կայունութեան հաստատմանն ուղղուած Մայր Աթոռի ջանքերը:

**Ս. ԳԱՅԱՆԷ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ ՅՈՒՆԻՍ 19-ԻՆ ՆՇՈՒԵՑԱԻ ԿԱԹՈՂԻԿԷ
ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍՆԻ ՏՕՆԸ ԳԼԽԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Պատարագիչն էր Մայր Աթոռի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բարայեանը: Պատարագին ներկայ էին Մայր Աթոռի տարբեր կառոյցներու մէջ պաշտօնավարող եպիսկոպոսներ, Հայաստանեան թեմերու առաջնորդներ եւ բազմաթիւ ուխտաւոր հայորդիներ:

Սրբազան Հայրը, անդրադառնալով տօնի խորհուրդին, ընդգծեց, որ այս սուրբ եկեղեցու կամարների ներքոյ մէկտեղուած հաւատաւոր ժողովուրդն այստեղ հաւաքուած ենք որպէսզի Սուրբ Էջմիածնով զօրանանք:

«Մեր ազգն իր հայեացքն ուղղեց դէպի Միածինը, եւ Միածինն իջաւ եւ ուռաւր նշեց վայրը, որտեղ պէտք է վեր խոյանայ Իր աղօթքի տունը, ուր, հաստատուեց քահանայապետական աթոռը, որտեղից դարեր շարունակ հաւատացեալ հայի սիրտը, հայի ստեղծագործ միտքը, հայի ազնիւ եւ զօրաւոր կամքը սնուում եւ ամրանում է:

Տեսիլքով ծնունդ առաւ 1719-ամեայ Սուրբ Էջմիածինը: Պատկառելի հնութեամբ, տեսլական սկզբնաւորութեամբ, հայ ժողովրդի կեանքում ունեցած ազգային-եկեղեցական եւ մշակութային պատմական դերով հայ ժողովրդի ամենանուիրական համազգային ուխտավայրն է Մայր Տաճարը: Լուռ թուացող քարերը կենդանի են ու խօսում են մեզ հետ դարերի խորքից, իսկ մեր աղօթքներն էլ լսում են, որպէսզի գալիք դարերին պատմեն:



Մեր նախնիներն ի գին իրենց կեանքի ազգային հպարտության ամենամաքուր զգացմունքներով, աչքի լոյսի պէս պահել ու պահպանել են Սուրբ Էջմիածինը՝ որպէս նշխար, որպէս նուիրական մասունք, որպէս աղբիւր լոյսի եւ յոյսի, որպէս տեսիլք լուսաւոր գալիքի: Աներկբայ է, որ այսօր կանք Սուրբ Էջմիածնով: Անաստան է Էջմիածինը, անաստան է ազգը հայոց», - ըսաւ Սուշեղ եպիսկոպոսը:

Սուրբ Պատարագի աւարտին, Ամենայն Հայոց Հայրապետին հանդիսապետութեամբ, կատարուեցաւ Սուրբ Էջմիածնի մաղթանք:

ՅՈՒՆԻՄ 20-ԻՆ ՇՔԱՆՇԱՆԻ ՏՈՒՌԻԶՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍԱԻՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Հայրենիքին, արցախահայութեան մատուցած ծառայութիւններու, հայրենանուէր, եկեղեցաւէր ու ազգաշահ իրագործումներու համար՝ Նորին Սրբութիւնը, «Սուրբ Ներսէս Շնորհալի» պատուոյ բարձր շքանշան շնորհեց Արցախի Հանրապետութեան նախագահի գլխաւոր խորհրդական Ռուդիկ Հիւսնունցին:

Հայրապետական սրբատառ կոնդակին մէջ նշուած էր. «Մեծարգոյ պրն. Հիւսնունց, Արցախեան շարժման առաջին տարիներէից ի վեր Դուք տարբեր յանձնառութիւններով բարի աւանդ էք բերում Արցախի առաջընթացին ու բարգաւաճմանը՝ յետպատերազմական այս ծանր ժամանակաշրջանում աննուազ նախանձախնդրութեամբ շարունակելով ջանքերը ի նպաստ առկայ դժուարութիւնների յաղթահարման եւ Արցախում բնակեալ Մեր զաւակների անվտանգ ու ապահով կեանքի:



Գոհունակութիւն է Մեզ համար անդրադառնալ, որ մեր Սուրբ Եկեղեցին Արցախում իր առաքելութեան իրականացման գործում ունի Ձեր հետեւողական աջակցութիւնն ու զօրակցութիւնը: Դուք Արցախի Թեմի վերաբացման ակունքներում էք եւ նախընթաց աւելի քան երեք տասնամեակների ընթացքին գովարժան ջանքեր էք ներդրել ի նպաստ արցախահայութեան հոգեւոր կեանքի կազմակերպման: Յատկապէս գնահատարժան է Ձեր աւանդը Մարտակերտի Սուրբ Կարապետ եկեղեցու վերանորոգութեան եւ վերաբացման գործում, որի նուիրական կամարների ներքոյ Քրիստոսասէր մեր ժողովուրդը ճաշակում է Տիրոջ կենարար Մարմինն ու Արիւնը եւ շնորհընկալը դառնում սուրբ խորանից բաշխուող օրհնութեան»:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅ ԻՐԱԻԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Յունիս 23-ին Վեհափառը ընդունեց ԱՄՆ-ում գործող Հայ իրաւաբանական միութեան նախագահ Լիւսի Վարպետեանը իր գլխաւորած պատուիրակութեամբ:

Տիկին Վարպետեան տեղեկացուց, որ կազմակերպութեան նպատակն է տարբեր միջազգային հարթակներու մէջ պաշտպանել հայ ժողովուրդի եւ արցախահայութեան իրաւունքներն ու շահերը, ինչպէս նաեւ հետամուտ ըլլալ Ադրբեջանի վերահսկողութեան տակ անցած տարածքներուն մէջ հայկական հոգեւորմշակութային ժառանգութեան պահպանման:

Զրոյցի ընթացքին Վեհափառ Հայրապետը պատասխանեց հիւրերու հարցերուն, առնուած համար Մայր Աթոռի կողմէ առնուող քայլերուն:



հայկական հոգեւոր արժէքներու պահպանութեան

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԱՐՑԱԽԻ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԸ ԵՒ ՄԱՐԴՈՒ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆԸ (ՄԻՊ)**

Յունիս 23-ին Վեհափառը ընդունեց Արցախի պետ-նախարար Արտակ Բեգլարեան եւ ԱՀ ՄԻՊ՝ Գեղամ Ստեփանեանը, ուղեկցութեամբ Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վրթանէս եպիսկոպոս Արքահամեանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Արցախի պետ-նախարարը քննարկեցին ներկայ պայմաններուն մէջ արցախահայութեան առջեւ ծառայած մար-տահրաւերները եւ յաղթահարման քայլերը:

Անդրադարձ կատարուեցաւ Արցախի պատմա-մշակութային եւ հոգեւոր ժառանգութեան պահ-պանութեան հարցերուն եւ Արցախ-Սփիւռք կապերուն:



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՐԻՈՑ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՄՊԱՆ ՆՈՐԱ ԱՐԻՍԵԱՆԸ**

Յունիս 27-ին Վեհափառը ընդունեց Հայաստանի Հանրապետութեան Սուրիոյ Արաբական Հանրա-պետութեան նորանշանակ արտակարգ եւ լիազօր դեսպան Նորա Արիսեանը:

Նորին Սրբութիւնը, իր օրհնութիւնն ու շնոր-հաւորանքը բերելով տիկին դեսպանին նշանակ-ան առիթով, մաղթեց արդիւնաւետ առաքելութիւն ի նպաստ երկու ժողովուրդներու դարաւոր բարե-կամական յարաբերութիւններու եւ գործակցու-թեան շարունակական ամրապնդման: Վեհափառ Հայրապետը գոհունակութեամբ անդրադարձաւ հայ-սուրիական պատմական կապերուն՝ ընդգծե-լով Սուրիոյ Հայ համայնքին կարեւոր դերակատարութիւնը անոնց զօրացման մէջ:



Վեհափառը անդրադարձաւ Սուրիոյ մէջ ահաբեկչական գործողութիւններուն, իսկ Արցախի 44-օրեայ պատերազմին հետեւանքով արձանագրուած ցաւալի կորուստներուն ու պատճառուած աւերածու-թիւններուն, վստահութիւն յայտնելով, որ երկու բարեկամ ժողովուրդները լուստեսութեան ոգիով ու զօրեղ հաւատքով կը յաղթահարեն իրենց առջեւ ծառայած մարտահրաւերները:

Նորին Սրբութիւնը նաեւ իր երախտագիտութիւնը յայտնեց Սուրիոյ իշխանութիւններուն Հայ համայնքի նկատմամբ ցուցաբերուող հոգատար վերաբերմունքին համար:

